Արձանագրություն

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2015թ. Նոյեմբերի 2-ի թիվ 9 նիստի:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու յոթ անդամներից հինգը՝ Մ. Ավետիսյանը, Շ. Կարապետյանը, Գ. Հայրապետյանը, Պ. Մելքոնյանը և Ն. Սիրականյանը բացակայում էր Կ. Արսենյանը և Ա. Սիրականյանը /առանց հարգելի պատճառների/:

Նիստը վարեց գյուղապետ Ռ. Սիրականյանը:

Արձանագրեց՝ Գ. Ղազարյան

Օրակարգ՝

Հարց-1. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Վարդաձոր համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել նիստի օրակարգը՝

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Վարդաձորի գյուղապետ՝ _____ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ _____ Մ. Ավետիսյան

_____ Շ. Կարապետյանը

_____ Գ. Հայրապետյան

_____ Պ. Մելքոնյան

_____ Ն . Սիրականյան

Արձանագրող՝ _____ Գ. Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19

2-ը Նոյեմբերի 2015թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը Վարդաձոր համայնքի բնակիներից սեփականության իրավունքով ձեռք է բերել Վարդաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 2 միավոր վարելահող 545 քառ.մ մակերեսով՝ ըստ հետևյալ կադաստրային ծածկագրի 05-084-0104-0226, 05-084-0104-0228 :

Հողամասերի ձեռքբերման հիմնական նպատակը ՎԶՄԲ կողմից ֆինանսավորվող «Էլեկտրակառավարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ՋԷԿ –ը Շինուհայր ենթակայանին միացնող 220կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցումն ու սպասարկումն է:

Վերը նշված ծածկագրերով հողամասերում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիայի:

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.06.2014թ. «Էլեկտրակառավարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում «Հրազդան ՋԷԿ –ը Շինուհայր ենթակայանին միացնող 220կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման մասին» № 599- Ն որոշման պահանջները, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանին տալիսէ իր համաձայնությունը համայնքի վարչական սահմաններում գտվող «ԲԷՑ» ՓԲԸ սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական 05-084-0104-0226, 05-084-0104-0228 կադաստրային ծածկագերրով , 545 քառ.մ մակերեսով վարելահողը, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի

կատեգորիա փոխադրելու վերաբերյալ՝ ՎԶՄԲ կողմից ֆինանսավորվող «Էլեկտրակառավարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում իրականացվող Հրազդան ՋԷԿ –ը Շինուհայր ենթակայանին միացնող 220կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման համար նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման համար:

Հարցը քվեարկվեց՝
Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

Վարչական գլուխ՝ _____ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ _____ Մ. Ավետիսյան

_____ Շ. Կարապետյանը

_____ Գ. Հայրապետյան

_____ Պ. Մելքոնյան

_____ Ն . Սիրականյան

Արձանագրող՝ _____ Գ. Ղազարյան